

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 թուր, կէս տարեկանը 6 թուր:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրքում են միմիայն անարտատրուած մէջ:
Ոտարարագրացրցից դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար գծարտում են
խորտակարգով թուր 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Հայութիւնից կտրուած հայեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Ղարսից, Նամակ Յիւրիկաւից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՆԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Տեղեկութիւններ Հայաստանից, Յրանսիա, Ամերիկա, Նամակ թիւրքիայից, Արտաքին լուրեր.—ԼԵՆՈՎԻՐՆԵՐ.—ՍԱՅՍԻՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՏՐՎԱԾ ՀԱՅԵՐ

Մշակի՜ ներկայ համարում տպւած լուրը Նոր-Նախիջևանից հաստատում է մեր ասածը հովհաննէան սարերից այն կողմն ընկած հայերի մասին: Նրանք գիտակցութիւն չունեն իրանց արածի մասին, նրանց արած կտակները մեծ մասը անհետք կորել է, նրանք իրանց նուէրներով ոչ ամբողջ հայութեանը, ոչ էլ իրանց քաղաքին օգուտ են տուել: Թղթակիցն ասում է, թէ երբ որ այդ հարուստ կտակողներին համոզում են նուիրել իրանց ահագին կարողութիւնը հայութեան այնպիսի կենտրոններին, որտեղ հայերը դեռ ևս գտնուում են իրանց պատմական հողի վրա, նրանք չեն էլ ուզում լսել ձեր խօսքերը և կրկնում են թէ կտակած ժամանակ պէտք է անպատճառ կտակեն իրանց զուգարները իրանց մայրենի քաղաքին:

Այդ երևոյթը շատ նշանաւոր մի երևոյթ է և զարձեայ հաստատում է մեր ասածները, որ Նոր-Նախիջևանի, Մոզզօլի, Ղարսի և այլ սրանց նման քաղաքների հայերը, կտրուած լինելով հայութեան բազմութենից, կորցրին ազգային ամբողջութեան վրա գաղափարը, կորցրին հայութեանը իրանց պատկանելու գիտակցութիւնը և միմիայն իրանց քաղաքի մասին ունեն հասկացողութիւն: Ուրեմն ազգային գաղափարի տեղը բռնել է նրանց մէջ սերը զէպի քաղաքը, լայն, ընդհանուր, ընդարձակ զգացմունքը փոխարինվել է նրանց արտում նեղ, տեղական, անայլին սիրով: Դա աննպաստ ապացոյց է որ այդ հայերը կտրուած են հայութիւնից:

Նոր-Նախիջևանցին տեսնում է ամբողջ ազգութիւնը Նոր-Նախիջևանի մէջ, հայութիւնը նա ճանաչում է միմիայն իր քաղաքում: մայրենի լեզուն, ազգային գաղափարը, հայրենի հողը, հայութեան մեծամասնութիւնը, նրա ապագայ բարոյական և անտեսական զարգացման գաղափարը խորթ են նոր-Նախիջևանցու, մոզզօլեցու, զղարեցու համար: Նա իր քաղաքի մէջն է ճանաչում ամբողջ հայութիւնը:

Եթէ այդ կղզիացու, Անգրիկոյսում խիստ կերպով ապրող հայերից կտրուած հայերը այլ ևս երբէք չը պէտք է վերագտնան մեզ հետ ապրելու, մեզ հետ մեր ուրախութիւններն ու ցաւերը բաժանելու համար, զոնէ հասկանային թէ իրանց ահագին գրամական միջոցներով կարող են օգնել մեր մտաւոր, բարոյական և անտեսական զարգացման գործին:

Եթէ զոնէ այն ինչ որ նրանք կտակում են իրանց մայրենի քաղաքին, պահպանվել, շօշափելի արգիւնք տար, ակներև օգուտներ բերել,—մենք ոչինչ չենք ունեն

նայ ասելու: Բայց քանի որ նրանց իրանց մէջ ընծայածն էլ անհետք կորչում է և նրանց իրանց քաղաքին կտակելը մնում է ապարդիւն ջանք,—աւելի լաւ չէր լինի, որ ըմբռնելով ազգային գաղափարը և նրան տեղական նեղ գաղափարից գերազանցելով, կտակէին իրանց զուգարները ազգին և ոչ թէ մի քաղաքին:

Գոնէ հայութեանից իրանց անձնապէս կտրուած լինելը դրստէն նրանով, որ դրամական միջոցների միջոցով պահպանելին իրանց կապը հայութեան մեծամասնութեան հետ և իրանց փողերով վերագարծնելին ազգին այն բարոյական կորուստը, որ, թէև անգիտակցաբար, պատճառեցին նրան հեռանալով նրա միջից և խլելով ազգից իր ոյժերի մի մասը:

Հարկուոր է որ նոր-Նախիջևանցի ինտելիգենցիան աշխատէր զարգացնել իր հարուստների մէջ ազգային իղէալը՝ նեղ, քաղաքային իղէալի տեղ, ու հասկացնէր այդ հարուստներին իրանց պարտաւորութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Սեպտեմբերի 18-ին

Այստեղ մի քանի հայ երիտասարդներ ուզում են բացանել հայոց գրագրան: Մտաւոր շատ արժան կը լինի—միայն 5 կոպ. և այդպիսի փոքր զուգարով կարող են օգուտ քաղել զանազան գրքերից, ամսագրներից և լրագրներից, որոնք բացի հայերէնից, կը լինեն և այլ լեզուներով: Գրագրանի անդամները կը լինեն միայն հայերը, որովհետև ապագայում ուզում են այդ գրագրանը ընծայել հայոց ուսումնարանին, բայց գրվել կարող են և այլազգիներ: Նրանք կարող են կարող թէ գրատար և թէ լրագրներն ու գրքերը տուն տանել: Հայոց գրագրանի նախագիծը արդէն պատրաստ է, սպասում են միայն նախագապետի վերագտնալուն, նրանից թույլտուութիւն խնդրելու:

Այստեղ այնքան շատ կան ցանկացողներ իրանց որդկերանց հայոց ուսումնարան տալու, որ հաւատալ անգամ դժուար է, Այժմ 300 աշակերտ կայ և 150 աւելի աշակերտուհի: Շատ և շատ ցաւալի է, որ քակարանը փոքր է: Հարկուոր է էլի մէկ պատրաստական դաստանու աւելացնել, բայց ոչ սենեակ կայ և ոչ էլ չիւթական միջոց աւելի ընդարձակ քնակարան վարձելու: զրա պատճառով տեսուչը ստիպւած է լինում շատերի խնդիրները մերժել և նրանց որդիներին ակամայ չընդունել:

Այժմ իրգիլից հրաւիրեցին երկու ուսուցիչներին իրանց անուսներով: Կարծեմ աւելի լաւ կը լինէր եթէ դրանց փոխանակ հրաւիրէին թիֆլիսի Գայեանեան ուսումնարանում աւարտած օրիորդներին: Նրանք աւելի նպատակն յարմար կը լինէին, քան իրգիլից հրաւիրածները, որոնք, երկու ուսում են աւել կրեանի ուսումնարանում:

Այստեղի տեսուչ պ. Ղազարեան անխոնջ աշխատում է ուսումնարանը բարոյեցնելու: Նա մինչև անգամ մտնակցում է թատերատեսչների ներկայացման, որ արվում է յոգուտ ուսումնարանի:

Համարեա բոլոր աշակերտները ձրի են սովորում իրանց չքաւորութեան պատճառով, բացի մի քանիներից, որոնք իրանց կարողութեան համար վճարում են տարեկան 5—10 և 15 թուր: Մեր այստեղի հայ վաճառականները, իրանց

փողերը չեն խնայում և նուիրում են ուսումնարանին իրանց ունեցածին համեմատապէս: Բայց ինչպէս պահպանել այդպիսի չնչին զուգարով 500 քաղցած ու ծարու, պատուտած ու զջրտած երիտասարդներին: Այդ ողորմելիները գոնէ տաք հագնված պիտի լինեն, որ այստեղի ցրտերին դիմանան և կարողանան ստանանանիք սենեակներում պարագել:

ՆԱՄԱԿ ՑԻՆՆՎԱԼԻՑ

Սեպտեմբերի 20-ին

Կարգավով «Մշակի» մէջ պ. Քալանթարի մի քանի յօդուածները կաւուրածական խնդրի վերաբերութեամբ, ես աւելորդ չեմ համարում մի քանի տեղեկութիւններ տալ ձեր պատուական թերթի կարգացողներին վրաստանի գիւղացիների և կալուածական ներկայ և անցաւ գրութեան վրա:

Պէտք է ասել, որ համեմատաբար երկրի տարածութեան և ժողովրդեան քանակութեան, ոչ մի ազգի մէջ, ոչ մի պետութեան մէջ չը կան այնքան խիստներ և ազնւականներ, որքան վրաստանի մէջ: Եթէ չեմ սխալուում ամենայն գիւղի մէջ կը գտնէք երկու կամ երեք տուն խիստ կամ ազնւական, շատ տեղ, մինչև անգամ, տաս տուն: Եթէ մենք պատմական կէտից նայենք այդ խիստների և ազնւականների մեծ մասի վրա, կը հասնենք այն եզրակացութեան, որ վրաստանի թագաւորները չնչին ընծայաբերութիւնների փոխարէն ներկայ եկող խիստների և ազնւականների հայերից շատերին բաժանելիս են եղել այդ սխալումները և նրանց նեղ էլ ահագին տարածութեամբ հողեր, գիւղեր, իրանց բնակիչներով և անտառներ:

Մինչև 1862 թականը գիւղացիները լինելով խիստների և ազնւականների հովանաւորութեան ներքոյ, այնպիսի անտանելի նեղութեան մէջ էին, որ ոչ մի մարդ չէ կարող երևակայել և արևանագրել նրանց գրութիւնը: Ճորտերը այն աստիճանի ընկճված էին իրանց պարտների առաջ, որ նրանց մէջ սեփականութիւն ասված բառը չը կար—ոչ հողը, ոչ ընտանիքը և ոչ օրական անդրական պիտոյքը չէր համարվում գիւղացու սեփականութիւն: Գիւղացիները հաց էին կալում,—պարտները փախցնում էին, խաղող էին քամում,—զարմեայ փախցնում էին, հիւր կը գար խիստի կամ ազնւական տանը,—գիւղացիք պարտական էին պատրաստութիւն տեսնել և պէտք է մորթէին իրանց կենդանիները և հաւերը: Թիրոջ տան համար փայտ բերել գիւղացու պարտականութիւնն էր, փող հարկուորից իշխանին կամ ազնւականին՝ պիտի գիւղացին պարտք վերցնէր և տար իր պարտին, տան համար ծառայ և աղախին զօրով դուրս էին բերում իրանց ճորտերի ընտանիքներից մէկ կամ երկու հոգի և շատերը ծառաներից ձմեռ ժամանակ տարբերիկ ման էին տնում, շարժանացնելով արեւմտեան անգամ, շատերին էլ զանազան պիտոյքների համար դրաւ էին դնում: Այսպէս գիւղացիները տարին տաներկու ամիս քրտիք էին թափում և իրանց աշխատանքի փոքր մասը միայն վայելում:

Գիւղացին ազնիկ մարդու էր տալիս, իր պարտին պէտք է հարցնէր և գիւղացին նրա համար մի լաւ ընծայ պատրաստէր և կային այնպիսի անխնայեանք պարտներ, որոնք պղծում էին գիւղացու մաքուր ընտանիքի սրբութիւնը: Այս իրողութիւնը գիւղացի կերպով արձանագրված է պ. խիստ իլիա ձափճավաճի բանաստեղծական տետրակի մէջ, իսկ եթէ վերս յիշված զեղծութեանի դեմ մի արտուած կը բարձրացնէր գիւղացին, խեղճի մէջից կային կը պլոկէին և մինչև անգամ կը մորթէին, ինչպէս մի անասուն: Երբ ազնւականները ճորտերը խիստների և ազնւականների ձեռքից, վրաստանի

բոլոր ազնիւ ցեղերը լաց էին լինում դառն արտասուներով, պատճառ, որ իրանք անհող, ծոյլ կեանքին սովորած՝ զրկվեցան ժողովրդեան աշխատող դասից, որոնք պատրաստում էին նրանց համար օրական պարէնը և աշխատութեան լուծը զրկեցաւ իրանց վրա:

Ճորտութիւնից ազատվելուց յետոյ գիւղացիներին արվեցաւ համալսարան հողաբաժին, որը և ամենքին յայտնի է համարածին հողի քանակութիւնը, բնակութեան տեղերը և այգիները, միայն մշակված երկրի պտուղների չորրորդ մասը՝ գիւղացիները պարտական են տալ կալուածատէր խիստին կամ ազնւականին: Բայց այս միջոցով չը բարւոքեց գիւղացիների վիճակը, քանի որ զարմեայ մեծ կապեր ունէին խիստի և ազնւականի մօտ՝ անտառից փայտ դուրս բերել, պտուղների չորրորդ մասը տալ և այլն: Այդ բոլորը դառնում է գիւղացիների և կալուածատէրի մէջ անբաւականութեան առիթ, և մեծ մասամբ անկիրթ կալուածատէրերը չեն հեռանում գիւղացու տանից, կամ ճանապարհի մէջ նրան պատահած ժամանակ մինչև որ չը շարժեն խեղճ գիւղացուն, չը խլեն նրա ունեցած բոլոր գործիքները, կենդանիները և շարժներով թողնում են գիւղացիներին բոլորովին պարտաւ: Եթէ գիւղացին մի բանով մեղաւոր է, կալուածատէրերը պարտական են դատաստանի դիմել և ոչ իրանց ձեռքով դատաստան վճարել: Ես տեսել եմ մտօնկ ժամանակներու շատ գիւղացիներ իրանց պարտներից մերձ ի մահ ձեռնված, իսկ գիւղացիները, իրանց սղիտութիւնից դեռ չեն կարող հասցնել իրանց դատը իր պատկանեալ տեղը և ձեռնողները մնում են զարմեայ անպատիւ:

Գիւղացիները ինչպէս բարւոքին իրանց վիճակը, իրանց անտեսական կողմը, ինչպէս դատարարական իրանց որդկերանց և լինեն հասկացող գիւղացիներ, եթէ ազատ չեն իրանց տան մէջ, իրանց ընտանքի մէջ, երբ տեսնում են որ ամենայն քայլափոխին փորձանքներ են սպասում նրանց և յաճախ ձեռն պէտք է ուտեն, Բացի սրանից գիւղացիների աշխատանքների արդիւնքը անցնում է զանազան մարդկերանց, մի մասը կալուածատէրերը, մի մասը պարտատէրերին, մի մասը քանաւային և այլն, և գիւղացին մնում է մեծ մասամբ քաղցած և բորիկ: Մենք շատ անգամ նախատում ենք մեր գիւղացիներին, թէ ինչու եւրոպական գիւղացիների նա չեն մրցում, ընենցէք նրանց վիճակը և այնպէս մեղադրեցէք, քանի որ այն աստիճան են բեռնաւորված, որ գրեթէ ոչ չունեն:

Ինչ ելք կայ մեր գիւղացիներին: Իմ կարծիքով մեր բարիխնամ տէրութիւնը պէտք է ճոզա քաշի մեր խղճով գիւղացու դրութեան վրա հետեւեալ միջոցներով: Տէրութիւնը կարող է գնել կալուածատէրերի բոլոր մուլքերը և համալսարան բաժանել գիւղացիներին, ընտանիքների բազմամարդութեան համեմատ իրեն ընծայ, որպէս զի գիւղացիները և կալուածատէր խիստները իրարից կտրուած չունենան: Իսկ եթէ զանաւարանը կը վնասվի այդ բանից, զնած մուլքերին տուած փողերը բաժանեն և փոքր մասերով դնեն գիւղացիների սուրբի վրա, այնպէս որ քոռն և կամ երեսուն տարուն վճարվեն տուած փողերը, ապա թէ ոչ մեր գիւղացիների դրութիւնը յուսահատական կը լինի:

Յանկալի է որ գիւղացիները լինեն մտածող, զորոճունայ, նիւթապէս ու անտեսապէս ապահովված և բարոյապէս զարգացած մարդիկ: Նիւթապէս ապահոված և բարոյապէս զարգացած գիւղացիները տէրութեանն էլ աւելի օգտակար կը լինեն իրանց անխոնջ արդիւնաւոր աշխատանքով:

Երբ գիւղական դատակարգը աւելի ծաղկեալ դրութեան մէջ կը լինի, ամբողջ պետութիւնն էլ աւելի հարուստ կը լինի:

Բարսեղ քան: Տէր-Արքայաճեանց